

Յոգնած կեանքի արհաւիրքներից և ուժասպառ՝ հիւանդ ուղեղը դադարեց գործելուց...

Հասարակական բուժարանի մի մռայլ ու առանձնացած սենեակում մեռաւ հայ ազգի արժանաւոր անդամներից մինը։—

Փակ սենեակից՝ միայնակ նայում էր նա դէպի ազատ աշխարհ ու իւր խիստ յոգնած ուղեղով մերթ դուարթ յոյսեր ներշնչում իրեն, մերթ՝ ընկնելով չար ոյժի պողպատի ճանկերը, զարհոյրի ու հոգեկան ալեկոծութեան փրփուրն էր թափում բերանից. ծանր էր պատկերը ինչպէս և վիճակը և բնութեան վեհ ոյժը խղճաց յոգնած մարմնին, ու զգայուն հոգին իւր գիրկն առնելով յաւիտենական հանգիստ տուեց նորան։

— Բայց ով էր նա։

— Հայոց գեղեցիկ գրականութեան աշխատաւորներից մինը՝ Մուրացանը (Գրիգոր Տէր-Յովհաննիսեան), որ իւր կեանքը նուիրեց հայ գրականութեան, ապրեց մինչև իւր վերջին շունչը նրանով։

Պատմութիւնն է միայն այն ուժեղ ձայնը, որ Sine iura et studio կարող է արժանի հատուցում տալ ամէն մի գրողին և այս դէպքում Մուրացանին։

Բացի այլ պարբերական հրատարակութիւններից Մուրացանը եռանդուն կերպով աշխատակցել է նաև Լումային առաջին տարուց սկսած և մինչև իւր հիւանդութեան վերջին օրը և մենք հետևեալ համարում կտանք նրա պատկերը կենսագրական տեղեկութիւններով միասին։

Իսկ այժմ մենք յայտնում ենք մեր սրտի կրակիծը երկարամեայ աշխատակցի ցաւալի կորստի առթիւ։